

ՄՏՈՒԳՈՂ ԽՄԲԻ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր (P127759)

Հունիսի 28, 2017թ.

Մույն փաստաթուղթը հաշվետվության անգլերեն բնօրինակի թարգմանությունն է:
Անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն բնօրինակը:

Բնօրինակի անգլերեն տարբերակը նաև տվյալ փաստաթղթի միակ պաշտոնական տարբերակն է:

Ստուգող խմբի

Վերջնական հաշվետվությունը և առաջարկությունը

Ստուգման պահանջի վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր (P127759)

Ա. Նախադրյալները

1. 2016 թ-ի մարտի 18-ին և մայիսի 3-ին Ստուգող խումբը (“Խումբը”) ստացել էր Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիրը (“Ծրագիր”) ստուգելու երկու Պահանջ (“Պահանջներ”): Ծրագիրը փոխարինում է չորս մեխանիկական ոռոգման համակարգերը ինքնահոս համակարգերով՝ նպատակ ունենալով կրճատել էլեկտրաէներգիայի սպառման ծավալները և ծախսերը: Ստուգում իրականացնելու պահանջների հեղինակները պնդում էին, որ Ծրագիրը կարող է բացասական ազդեցություն ունենալ երկու համայնքների ոռոգման ջրի մատակարարման և զբոսաշրջության վրա, և որ հանրային քննարկումների և համայնքների մասնակցության մակարդակը թերի է եղել: Առաջին Պահանջը ներկայացրել էին Գողթ համայնքի անդամները, որոնք խնդրել էին Ստուգող խմբին գաղտնի պահել իրենց ինքնությունը¹: Երկրորդ Պահանջը ներկայացրել էին տիկնայք Սառա Պետրոսյանը և Արուսյակ Այվազյանը՝ իրենց և Գառնի գյուղի 531 բնակչի անունից²: Նրանք խնդրել էին Ստուգող խմբին գաղտնի պահել այդ 531 բնակչի ինքնությունը: Քանի որ երկու Պահանջն էլ բարձրացնում էին նմանատիպ հարցեր նույն Ծրագրի շրջանակներում կառուցվող ինքնահոս ոռոգման համակարգերի վերաբերյալ, ինչպես նաև հաշվի առնելով տնտեսելու և արդյունավետության նկատառումները, Ստուգող խումբը որոշեց ուսումնասիրել այդ Պահանջերը համատեղ: Սույն Հաշվետվության մեջ երկու համայնքից բողոք-պահանջները ներկայացրած անձինք հիշատակվում են որպես “Պահանջողներ”:

2. Ստուգող խումբը գրանցել է ստուգում իրականացնելու Պահանջները 2016 թ-ի ապրիլի 26-ին և մայիսի 24-ին և ստացել է Բանկի Ղեկավարության պատասխանը 2016 թ-ի հունիսի 10-ին: 2016 թ-ի հունիսի 17-ից մինչև հունիսի 21-ը Ստուգող խումբն

¹ Պահանջը պարունակում է Գողթ համայնքի 98 անդամի ստորագրությունները:

² Գառնին և Գողթը հարևան գյուղեր են, որոնք գտնվում են միմյանցից 10 կմ-ից պակաս հեռավորության վրա:

այցելել է օբյեկտները և տեղեկացել, որ Հայաստանի կառավարությունը (ՀԿ) առաջարկում է փոփոխություններ անել Ծրագրում, որոնք պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություններ, քննարկումներ և Բանկի կողմից Ծրագրի վերագնահատում: Հետևաբար Խումբը որոշեց շուրջ 12 ամսով հետաձգել հետաքննություն իրականացնելու հիմնավորվածության վերաբերյալ իր կարծիքի տրամադրումը: Իրավիճակը գնահատելու նպատակով Ստուգող խումբը կրկին այցելեց Հայաստան 2017 թ-ի հունիսի 1-ից մինչև հունիսի 4-ն ընկած ժամանակահատվածում: Սույն Հաշվետվությունը ներկայացնում է Խմբի վերջնական կարծիքը հետաքննություն իրականացնելու հիմնավորվածության վերաբերյալ:

Բ. Ծրագիրը

3. Համաշխարհային բանկի Գործադիր տնօրենների խորհուրդը (“Խորհուրդ”) հաստատել է 30 միլիոն ԱՄՆ դոլար գումարով (ՎԶՄԲ Հատուկ ներդրումների փոխառություն) վարկային Ծրագիրը 2013 թ-ի մայիսի 22-ին: Ծրագրի Փակման ժամկետը վերջերս երկարացվել է 2017 թ-ի հունիսի 30-ից մինչև 2018 թ-ի հունիսի 30-ը³: Ծրագրի Զարգացման նպատակն է *“ընտրված ոռոգման համակարգերում կրճատել օգտագործվող էլեկտրաէներգիայի ծավալը և բարձրացնել ոռոգման համակարգի արդյունավետությունը:*”⁴ Ծրագիրը ֆինանսավորում է ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցման աշխատանքները չորս տարածքներում, այդ թվում՝ Գեղարդալճի համակարգում, որն առաջին բողոք-պահանջի առարկան է, և Քաղցրաշենի համակարգում, որը երկրորդ բողոք-պահանջի առարկան է:

4. Գեղարդալճի շինհրապարակում Ծրագրի նախագծով նախատեսվում էր փոխարինել Ազատ գետից ջուր մղող յոթ պոմպակայաններից երեքը և դրանց փոխարեն օգտագործել ինքնահոս ոռոգման համակարգը, որը պետք է ջուր վերցնէր Գեղարդալճի ջրամբարից: Այս աշխատանքով նախատեսվում էր բարձրացնել ջրամբարի պատվարը 1,6 մետրով՝ ջրամբարի ծավալը 2,4 միլիոն խորանարդ մետրից 3,4 խորանարդ մետրին հասցնելու համար, ինչպես նաև կառուցել 23 կմ երկարությամբ ճնշումային խողովակաշար և հարակից կառուցվածքներ:

5. Քաղցրաշենի օբյեկտում Ծրագրի նախագծով նախատեսվում էր Ազատ գետի վրա՝ Ազատի ջրամբարից 9 կմ հոսանքն ի վեր, կառուցել ջրընդունիչ կառուցվածք: Նախատեսվում էր կառուցել նաև 23,5 կմ երկարությամբ խողովակաշար, որով ջուրը պետք է տեղափոխվեր դեպի Քաղցրաշենի պոմպակայանի գոյություն ունեցող ջրթափ ավազան՝ այդ համակարգի սպասարկման տակ գտնվող հողերը ինքնահոս եղանակով ոռոգելու մտադրությամբ:

³ Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի (հաստատված 2013 թ-ի մայիսի 22-ին) առաջարկվող վերակազմավորման 2017 թ-ի ապրիլի 27-ին թվագրված Վերակառուցման Փաստաթուղթ:

⁴ ԾԳՓ (PAD), էջ 7:

Գ. Ստուգման պահանջերը

6. Առաջին Պահանջում, որը ներկայացրել էին Գեղարդալճի ռոռգման համակարգի ազդակիր Գողթ համայնքի անդամները, Պահանջողներն արտահայտում էին իրենց մտահոգությունը, որ Ծրագրի իրականացման արդյունքում կարող է պակասել իրենց համայնքի ռոռգման ջուրը, որը համայնքը ստանում է Գեղարդալճի ջրամբարից: Պահանջողները պնդում էին, որ հիդրոլոգիական տվյալների հաշվարկման համար Ծրագրում կիրառվող մեթոդաբանությունը թերի է եղել: Պահանջողները պնդում էին նաև, որ հանրային քննարկումները և ազդակիր համայնքների մասնակցությունը Ծրագրում բավարար մակարդակի չեն եղել:

7. Երկրորդ Պահանջում, որը ներկայացրել էին Քաղցրաշենի ռոռգման համակարգի ազդակիր Գառնի համայնքի բնակիչները, նշվում էր, որ Ծրագիրն ունի բացասական բնապահպանական և սոցիալական ազդեցություն, տնտեսապես անարդյունավետ է, ռիսկային և ոչ կենսունակ: Պահանջը ներկայացրած անձանց անհագստացնում էին ջրի անբավարարությունը ինքնահոս եղանակով ռոռգում իրականացնելու համար, Ազատի կիրճի ոչնչացումը, ինչը կազդեր զբոսաշրջության վրա, ինչպես նաև հանրային քննարկումներին և համայնքի մասնակցությանը վերաբերող խնդիրները:

Դ. Ղեկավարության պատասխանը

8. Պահանջներին ուղղված իր պատասխանում Ղեկավարությունը չէր համաձայնվել այն կարծիքի հետ, որ ենթադրյալ վնասն իրոք գոյություն ուներ կամ որ դրան հանգեցրել էր Բանկի քաղաքականության պահանջների կատարման թերացումը: Համաձայն տրված Պատասխանի, երկու համակարգերն էլ նախապատրաստվել էին մանրակրկիտ կերպով և Բանկի քաղաքականության պահանջներին համապատասխան: Ղեկավարությունը բացատրել էր, որ Ծրագիրը չի փոխելու ռոռգման ջրի առկա ծավալը կամ վերջինիս բաշխումը և որ ջուրն ուղղակի տեղափոխվելու է ինքնահոս եղանակով:

9. Ղեկավարությունը նշել էր նաև, որ երկու ռոռգման համակարգերն էլ կենսունակ են, ջրի հոսքի հաշվարկները իրատեսական են և պահպանողական, և որ Ծրագիրը չէր կրճատելու ռոռգման ջրի մատակարարումը, այլ նախագծված էր ապահովելու, որ երկու համայնքներն էլ շարունակեն ստանալ այն: Ղեկավարությունը պնդում է, որ ստուգման Պահանջներում արտահայտված մտահոգություններից շատերը հիմնված են եղել ոչ ճշգրիտ տեղեկատվության և սխալ ենթադրությունների վրա:

Ե. Ստուգող խմբի առաջին հաշվետվության և առաջարկության հիմքում ընկած զարգացումները

10. 2016 թ-ի հունիսին Խումբը այցելել է Հայաստան և հանդիպել է երկու համայնքներից ստուգման Պահանջները ներկայացրած անձանց և այլ շահագրգիռ

կողմերին, որպեսզի գնահատի Պահանջների տեխնիկական հիմնավորվածությունը և հավաքագրի տվյալներ՝ Խմբին ուղղված իր առաջարկությունը պատրաստելու համար: Խմբի այցից հետո Ջրային տնտեսության պետական կոմիտեն հրապարակեց մամլո հաղորդագրություն, առաջարկելով փոփոխություններ անել Ծրագրում: Այնուհետև Բանկի ղեկավարությունը Խմբին ներկայացրեց առաջարկվող փոփոխությունները նկարագրող փաստաթուղթ: Համաձայն Ղեկավարության տվյալների, այդ փոփոխությունները լուծելու էին Պահանջներում արտացոլված խնդիրները, սակայն դրանք պահանջում էին լրացուցիչ ուսումնասիրություններ, հանրային քննարկումներ և Բանկի կողմից Ծրագրի վերագնահատում⁵:

11. Ինչ վերաբերում է Գեղարդալճի համակարգին, Հայաստանի կառավարությունը որոշեց ընդունել Գողթ համայնքից Պահանջողների առաջարկություններից մեկը՝ կառուցել լրացուցիչ ջրանցք, որը՝ վերցնելով ջուրը Գիլանլար գետից, լրացուցիչ ներհոսք կապահովի ջրամբարի համար: Ղեկավարությունը բացատրեց, որ տեխնիկական տեսանկյունից դրա անհրաժեշտությունը չկա, բայց այնուամենայնիվ այն լրացուցիչ աղբյուրի ջուր կհանդիսանա ջրամբարի համար՝ էլ ավելի կրճատելով շահառու համայնքներին սպառնացող ռիսկերը երաշտի դեպքում:

12. Ինչ վերաբերում է Քաղցրաշենի համակարգին, Հայաստանի կառավարությունը որոշեց չկառուցել նոր գլխամասային հանգույց Ազատ գետի վրա, այլ օգտագործել ավելի ցածր բարձրության վրա՝ հոսանքն ի վար 5 կմ հեռավորության վրա գտնվող կառուցվածքը: Ղեկավարությունը նշել է, որ բարձրությունը կորցնելու պատճառով համակարգը կշարունակի կախված լինել պոմպերից, որոնք համայնքներին ոռոգման ջուր մատակարարելու համար պետք է էլեկտրակենտրոն օգտագործեն: Բանկի թիմի նախնական վերլուծությունը ցույց է տվել, որ այդ համակարգն ամեն դեպքում կունենա դրական տնտեսական վերադարձելիություն: Ղեկավարությունն այդ փուլում նշել էր, որ փոխզիջումային նախագծի իրականացումը հնարավոր է, բայց հաստատել էր, որ այն զիջում է սկզբնական նախագծին:

13. Ղեկավարությունը տեղեկացրել է նաև Ստուգող խմբին, որ եթե Բանկը որոշի, որ այդ նախագծային փոփոխությունները կարող են ֆինանսավորվել Ծրագրի շրջանակներում, ապա դրանց վերագնահատումը կարելի է ավարտել մինչև 2017 թ-ի ապրիլը, և ներկայացրել էր Խմբին այդ աշխատանքի մանրամասն ժամանակացույցը: Այդ զարգացումների լույսի ներքո Ստուգող խումբը 12 ամսով հետաձգել էր իր առաջարկության տրամադրումը Խորհրդին՝ հետաքննության հիմնավորված լինելու վերաբերյալ: Խորհուրդը հաստատեց այս հետաձգումը 2016 թ-ի հուլիսի 16-ին:

⁵ Նորացված տվյալները վերաբերում են Հայաստանի կառավարության 2016 թ-ի հուլիսի 5-ի Որոշմանը: Տես՝ 2016 թ-ի հուլիսի 8-ի Խմբի Հաշվետվության և Առաջարկության Հավելված IV-ը:

14. Նշված Պահանջների, Ծրագրի, Ղեկավարության պատասխանի և Ստուգող խմբի նախորդ դիտարկումների և առաջարկության մանրամասներին կարող էք ծանոթանալ Խմբի՝ 2016 թ-ի հուլիսի 8-ի⁶ Հաշվետվության մեջ:

2. Ծրագրի զարգացումները՝ Ստուգման պահանջների ընդունելիության/հրավունակության վերաբերյալ Ստուգող խմբի առաջին հաշվետվությունը ներկայացնելուց հետո

15. Պահանջողներից ստացած նորացված տվյալները: 2016 թ-ի հուլիսին առաջին Հաշվետվությունն ու առաջարկությունը գրելուց հետո Խումբը մշտական կապի մեջ է եղել Պահանջողների հետ: Գողթ համայնքի Պահանջողները գոհունակություն հայտնեցին Գեղարդալճի ջրամբարը սնուցող Գիլանլարի ջրանցքի պլանավորվող կառուցման և ջրամբարի վերականգնման աշխատանքների համար: Նրանք կարևորեցին նաև ոռոգման ջրի բավարար ծավալի ապահովելը՝ իրենց համայնքի պահանջարկը բավարարելու համար: Նրանք կրկնեցին երկրորդ ջրամբար կառուցելու իրենց խնդրանքը՝ համայնքին լրացուցիչ ջուր տրամադրելու նպատակով:

16. Գառնի համայնքից Պահանջողներից մեկը՝ տիկին Պետրոսյանը, տեղեկացրել էր Խմբին, որ 2016 թ-ի նոյեմբերին ինքը հրավիրվել էր Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակ՝ Ծրագրի թիմին հանդիպելու համար: Այս հանդիպումից հետո տիկին Պետրոսյանը տեղեկացրել էր Խմբին, որ այլևս ծրագրի հետ կապված վերապահումներ չունի: Այնուհետև, 2016 թ-ի դեկտեմբերին տիկին Պետրոսյանը տեղական *Հետք* թերթում հրապարակել է «Գառնի համայնքի բնակիչների երկու տարվա պայքարը հաջողությամբ է ավարտվել» խորագրով մի հոդված, որտեղ նշվում էր, որ «*Քաղցրաշենի ինքնահոս համակարգի այսպես կոչված «փոխզիջող» նախագիծը բավարարում է Գառնի բնակիչների ներկայացրած պահանջները*»:

17. Տիկին Պետրոսյանը տեղեկացրել է Խմբին, որ 2017 թ-ի հունվարին ինքը նույնպես հանդիպել է Գառնի համայնքի մի քանի անդամներին, որպեսզի քննարկի նրանց հետ Ծրագրի փոփոխությունները, և նրանք նոր նախագծերի վերաբերյալ առարկություններ չեն ունեցել: Տիկին Պետրոսյանը տեղեկացրել է Խմբին ամբողջ համայնքի հետ հանրային քննարկումներ կազմակերպելու կարևորության մասին: Երկրորդ Պահանջողը Գառնի համայնքից՝ Արուսյակ Այվազյանը, 2017 թ-ի փետրվարին տեղեկացրել էր Խմբին, որ նոր նախագծերը հասանելի չեն եղել հանրությանը և որ շինարարական աշխատանքները սկսվել են առանց հանրային քննարկումների: Նա տրամադրեց Ստուգող խմբին նաև իր մտավախություններն արտահայտող մի քանի նամակներ՝ գրված Համաշխարհային բանկին, Ջրային տնտեսության պետական կոմիտեին, Վարչապետին և Բնապահպանության նախարարին, և նրանցից ստացած պատասխանները:

⁶ [http://ewebapps.worldbank.org/apps/ip/Panel/Cases/106-Eligibility%20Report\(English\).pdf](http://ewebapps.worldbank.org/apps/ip/Panel/Cases/106-Eligibility%20Report(English).pdf)

⁷ <http://hetq.am/eng/news/74362/two-year-struggle-of-garni-residents-in-armenia-leads-to-success.html/>

18. **Ղեկավարությունից ստացած թարմացված տվյալները:** Ղեկավարությունը 2016 թ-ի նոյեմբերի 11-ից մինչև 18-ը վերահսկողական այցով գտնվում էր Հայաստանում՝ Գեղարդալճի և Քաղցրաշենի ոռոգման համակարգերի փոփոխությունները գնահատելու նպատակով: Առաքելության Հուշագիրը ներկայացվեց Ստուգող խմբին: Հուշագրում ամփոփվում են առաջարկված փոփոխությունները և բացատրվում է, որ այս Ծրագրի առավել մարտահրավերային խնդիրները շարունակում են զարգանալ այդ երկու ոռոգման համակարգերի շուրջ՝ համայնքների դիմադրության պատճառով:

19. 2017 թ-ի հունվարին Ստուգող խումբը կրկին հանդիպել է Ղեկավարության հետ, որպեսզի քննարկի Ծրագրի առաջարկված փոփոխություններին առնչվող առաջընթացը: Ղեկավարությունը տեղեկացրել է Խմբին, որ իրականացման փուլում են գտնվում երկու ոռոգման համակարգերի փոփոխությունների հետ կապված Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումների թարմացման աշխատանքները: Բանկի թիմը հայտնեց Ստուգող խմբին, որ հանդիպել է երկու համայնքների անդամներին և գյուղապետերին, որպեսզի քննարկի նրանց հետ նախագծերի փոփոխությունները: Ըստ Ղեկավարության՝ բոլորը ողջունեցին Ծրագրի նոր նախագծերը: Ղեկավարությունը տեղեկացրեց Խմբին, որ քննարկվեց նաև Գողթ համայնքի՝ նոր ջրամբար կառուցելու խնդրանքը: Թեև վերջինս գտնվում է Հայաստանի կառավարության ապագա հավանական ծրագրերի ցանկում, սակայն պարզ չէր, կֆինանսավորի արդյոք Համաշխարհային բանկը այդ շինարարությունը թե ոչ: Ղեկավարությունը կրկին անգամ նշեց, որ Ծրագիրը կենսունակ է և ամբողջությամբ կարող է հասնել իր նպատակներին առանց երկրորդ ջրամբարի կառուցման: 2017 թ-ի ապրիլին Ղեկավարությունը տեղեկացրեց Խմբին, որ Ծրագիրը վերակազմավորվել է և Ծրագրի փակման ժամկետը երկարացվել է մինչև 2018 թ-ի 30-ը⁸:

20. 2017 թ-ի մայիսին Խումբը կրկին հանդիպել է Ղեկավարությանը և տեղեկացել է, որ Գեղարդալճի ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների 90 տոկոսն ավարտված է: Լրացուցիչ Գիլանլար ջրանցքի սկզբնական հողային աշխատանքները սկսվել են, բայց բետոնային աշխատանքների մեծ մասը դեռ պետք է իրականացվի: Ձմռան եղանակային պայմանների պատճառով աշխատանքը կարող է իրականացվել միայն ամռան ամիսներին: Այդ աշխատանքների իրականացումը պետք է շուտով սկսվեր և ավարտվեր մինչև 2017 թ-ի սեպտեմբերը: Ղեկավարությունը տեղեկացրեց նաև Խմբին, որ աշխատանքները Քաղցրաշենի համակարգի գլխամասային հանգույցում ավարտված են շուրջ 70 տոկոսով:

Է. Ստուգող խմբի երկրորդ այցը և նրա դիտարկումները

21. 2017 թ-ի հունիսին Ստուգող խմբի անդամներ Ժան Մաթթսոնը և Գործառնությունների պատասխանատու Բիրգիտ Կուբան կատարեցին երկրորդ այցը

⁸ Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի (հաստատված 2013 թ-ի մայիսի 22-ին) առաջարկվող վերակառուցման Փաստաթուղթ՝ թվագրված 2017 թ-ի ապրիլի 27-ին:

Հայաստան և հանդիպեցին Պահանջողներին և Գողթ ու Գառնի համայնքների մյուս անդամներին, երկու համայնքների գյուղապետերին, ինչպես նաև Համաշխարհային Բանկի երևանյան գրասենյակի, Ջրային տնտեսության պետական կոմիտեի և Ֆինանսների նախարարության ներկայացուցիչներին:

22. Այցի ընթացքում Ստուգող խումբը նկատեց, որ Բանկը և Ծրագրի իրականացման գրասենյակը աշխատում են լուծել համայնքների մտահոգությունները և կարևոր են համարում նախագծային փոփոխությունները ժամանակին իրականացնելը: Բանկի թիմն ընդունել է, որ այդ դեպքը կարևոր դաս է Բանկի և Ծրագրի իրականացման գրասենյակի համար, թե ինչպես է պետք տեխնիկական տեղեկատվությունը հասցնել ոչ փորձագետներից կազմված լսարանին և ինչպես ավելի լավ ապահովել ազդակիր բնակչության մասնակցությունը Ծրագրում: Բանկի թիմը ներկայացրեց Խմբին մի փաստաթուղթ, որն ամփոփում էր երկու ռոռզման համակարգերի իրազեկման ժողովները, որոնք տեղի էին ունեցել 2016 թ-ի դեկտեմբերի 21-ին և 22-ին՝ համապատասխանաբար Գառնի և Գողթ գյուղերում: Ստուգող խումբը տեղեկացավ նաև, որ Հայաստանի կառավարությունը ստանալու է Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորումը Գողթ և Գառնի գյուղերի ներքին խողովակների վերականգնման համար՝ երկու համակարգում ջրի լուրջ կորուստները վերացնելու համար: Այս աշխատանքը կապված չէ Համաշխարհային Բանկի ֆինանսավորած ծրագրի հետ; աշխատանքների սկիզբը ակնկալվում է առաջիկա ամիսներին:

23. Ստուգող խմբի հետ հանդիպման ժամանակ Գողթ համայնքից Պահանջ ներկայացրած անձինք արտահայտեցին իրենց գոհունակությունը Գեղարդալճի ջրամբարի վերանորոգման, ջրամբարի ճաքած ջրթափ խողովակի նորոգման և Գիլանլար ջրանցքի պլանավորվող շինարարության համար: Համայնքը կարևորեց շինարարական աշխատանքների ժամանակին և բարձր որակով իրականացումը և՛ ելնելով տվյալ տարածքում ջրի սակավությունից, շեշտեց երկրորդ ջրամբարի կառուցման խնդրանքի կարևորությունը՝ ռոռզման ջրի պահանջարկը համայնքում բավարարելու համար:

24. Գողթ համայնքի անդամները տեղեկացրել են Ստուգող խմբին, որ ծախսել են շատ ժամանակ և գործադրել են մեծ ջանքեր, որպեսզի տարիների ընթացքում պահպանեն Գեղարդալճի ջրամբարը, և որ անցյալում նրանք եղել են այդ ջրամբարից ջուր վերցնող միակ համայնքը: Նրանք հասկանում են, որ մյուս համայնքներն էլ ռոռզման ջրի կարիք ունեն, բայց շարունակում են անհանգստանալ, որ ջուրը բավական չի լինելու բոլոր պահանջարկները բավարարելու համար: Պահանջողները տեղեկացրեցին նաև Խմբին, որ ունեն լրացուցիչ հողեր, որոնք նրանք ուզում են ռոռզել, սակայն հիմա չեն կարողանում բավարար չափով ռոռզել գյուղատնտեսական նպատակներով արդեն իսկ օգտագործվող հողերը: Ստուգող խումբը նկատեց համայնքի որոշ անդամների շրջանում ընդհանուր անվստահություն Ծրագրի նախագծի համար օգտագործված տվյալների նկատմամբ, այդ թվում՝ ջրամբարում

ջրի մակարդակի և ֆիլտրման կայանի հոսքի արագության նկատմամբ: Գողթ համայնքի անդամները նույնպես կիսվեցին Խմբի անդամների հետ իրենց մտավախություններով, որոնք վերաբերում էին տեղեկատվության հրապարակմանը և հանրային քննարկումներին: Նրանք վերահաստատեցին Ծրագրի շրջանակներում առցանց հետազոտությամբ ջրաչափական սարքերի տեղադրման անհրաժեշտությունը:

25. Գառնիում տիկին Պետրոսյանը հաստատեց, որ Ծրագրի հետ կապված իր անհանգստությունը փարատված է և որ ինքը բավարարված է, որ լուծումը գտնվել է նախագծային փոփոխությունների միջոցով: Նա տեղեկացրեց Խմբին, որ համոզված է, որ վերակազմավորումից հետո Ծրագիրը բնապահպանական և ֆինանսական առումներով օգտակար է համայնքի համար: Նա շարունակեց արտահայտել իր մտահոգությունը տարածքում առկա ջրի սակավության վերաբերյալ: Ինչպես և Գողթ համայնքում, տիկին Պետրոսյանը նշեց, որ ջրաչափական սարքերի տրամադրումը կօգնի բարձրացնել համայնքի վստահությունը Ծրագրի նկատմամբ:

26. Երկրորդ Պահանջողը Գառնի համայնքից՝ տիկին Այվազյանը, բացատրեց Ստուգող խմբին, որ համոզված է, որ թեև պոմպն այժմ գտնվելու է ստորին բիեֆում/հոսանքն ի վար, Ծրագիրը, այդ թվում՝ Գեղարդալճի համակարգի շրջանակներում Գիլանլար ջրանցքի կառուցումը, ամեն դեպքում ազդեցություն կունենան Ազատ գետի և Կիրճի վրա: Տիկին Այվազյանն ասաց Խմբին, որ նրան շարունակում է անհանգստացնել ոռոգման ջրի ծավալի կրճատումը Գառնու շրջակայքում գտնվող հողերի ոռոգման համար: Խումբը, սակայն, հասկանում է, որ Ծրագիրը չի փոխում ոչ եղած ոռոգման ջրի ծավալը, ոչ էլ ջրի բաշխումը, այլ ազդում է ջրի տեղափոխման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի պահանջարկի վրա: Խումբը նշում է նաև իր ըմբռնումը, որ նախագծային փոփոխության և նոր գլխամասային հանգույցի շինարարության փոխարեն 5 կմ հեռավորության վրա հոսանքն ի վար գոյություն ունեցող գլխամասային հանգույցի օգտագործման արդյունքում Ծրագիրն ազդեցություն չի ունենալու Գառնու զբոսաշրջային վայրերի վրա: Գառնիում Խումբը հանդիպեց նաև համայնքի մյուս անդամներին և տեղեկացավ, որ շատերը անհագստացած են ջրի աղբյուրների վրա ազդող զարգացումներով, ինչը պայմանավորված է նրանց նախկին փորձով, երբ այլ ծրագրերի իրականացումը նպաստում էր ջրի սակավության խորացմանը:

Ը. Առաջարկությունը

27. Ներկայացնելով իր առաջարկությունը, Ստուգող խումբը հաշվի է առել հետևյալը. 1) երկու ոռոգման համակարգերի նախագծային փոփոխությունները, որոնք առաջարկել է Հայաստանի կառավարությունը, և այդ նախագծերի գնահատումը Բանկի կողմից, 2) Ստուգման պահանջը ներկայացրած անձանց և համայնքների մյուս անդամների կարծիքները այդ նախագծային փոփոխությունների վերաբերյալ, և 3) Բանկի ղեկավարության աշխատանքը ազդակիր համայնքների հետ ստուգում անցկացնելու Պահանջները ստանալուց հետո:

28. Խմբի կարծիքով, նշված երկու ոռոգման համակարգերի նախագծային փոփոխությունները, որոնք հիմնված են ազդակիր համայնքների կողմից ներկայացված առաջարկների վրա, տրամադրում են համապատասխան հավաստիացումներ, որ կկանխեն Ծրագրի հավանական վնասը: Խումբը նշում է, որ Ղեկավարությունը՝ անցած տարվա իր աշխատանքի ընթացքում համարժեքորեն զբաղվել է երկու Պահանջներում բարձրացված խնդիրներով: Հաշվի առնելով 1999 թ-ի Պարզաբանման փաստաթղթի 5-րդ կետը (որով նախատեսվում է, որ *“Ստուգող խումբը պետք է համոզվի, որ Բանկի կողմից իր պահանջների կատարումը կամ պահանջների կատարման մտադրության ապացույցը համարժեք են, և արտացոլի այդ գնահատականը Խորհրդին ուղղված հաշվետվության մեջ”*), Ստուգող խումբը խորհուրդ չի տալիս հետաքննություն իրականացնել:

29. Խումբը կարևորում է ազդակիր համայնքների հետ շարունակական աշխատանքը՝ ապահովելու համար նրանց քաջատեղյակ լինելը Ծրագրի տարբեր կողմերի և զարգացումների մասին: Խումբը նշում է նաև նախագծային փոփոխությունները ժամանակին իրականացնելու, ինչպես նաև ջրի օգտագործման թափանցիկությունն ապահովելու կարևորությունը: Կարևոր է ապահովել ծրագրի փաստաթղթերով նախատեսված ջրի հոսքի չափման սարքերի տրամադրումը և տվյալների հասանելիությունը ազդակիր համայնքների համար, որպեսզի նրանք կարողանան վերահսկել ոռոգման ջրի իրենց թույլատրված ծավալների առկայությունը:

30. Խումբը նշում է, որ այս առաջարկությունը ոչ մի կերպ չի կանխում ստուգում անցկացնելու ապագա Պահանջ ներկայացնելու հնարավորությունը՝ հիմնված նոր ապացույցների կամ հանգամանքների վրա, որոնք հայտնի չէին այս Պահանջերի ուսումնասիրության ժամանակ: Եթե Գործադիր տնօրենների Խումբը համաձայն է այս առաջարկության հետ, ապա Ստուգող խումբը համապատասխանաբար կտեղեկացնի դրա մասին Պահանջողներին և Ղեկավարությանը:

Սույն փաստաթուղթը հաշվետվության անգլերեն բնօրինակի թարգմանությունն է:
Անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն բնօրինակը:

Բնօրինակի անգլերեն տարբերակը նաև տվյալ փաստաթղթի միակ պաշտոնական տարբերակն է: